«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ "ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՌԵԱԿՏԻՎՆԵՐԻ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԳՀԱՊՁԲ-2020/15-4-ԵՊԲՀ-3>>

ք. Երևան «____» «_____» 2020 թ.

«**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր՝ **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Ար-Մեդիկա» ՍՊԸ**-ը, ի դեմս տնօրեն **Ա.Սադոյան**-ի, որը գործում է **«Ար-Մեդիկա»__ՍՊԸ**-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5347263 (հինգ միլիոն երեք հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացրած պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

---

[19] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար,ապա գնման առարկայի չմատակարարված,մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>> **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>** **Հիմնադրամ** **Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2** **Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ** **h/h 11500166513800** **ՀՎՀՀ 01503448** **Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան** **(ստորագրությունը)** **Կ.Տ** Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2020.03.24 13:07:41 AMT	**<<ՎԱՃԱՌՈՂ>>** **«Ար-Մեդիկա» ՍՊԸ** **Հասցե՝ ք. Երևան,Լենինգրադյան 23/11,92տ,** **Բանկ՝ ԱմերիաԲանկ ՓԲԸ** **Հ/Հ 1570023018670100** **ՀՎՀՀ 01268548** **Հեռ՝ +374 10 38 01 81** **Էլ.հասցե ՝ armedica2010@gmail.com** **Տնօրեն՝ Աննա Սադոյան** **(ստորագրությունը)** **Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Digitally signed by HAKOBYAN NARINE 5103830671
Date: 2020.03.19 12:03:07 GMT+04:00

Հավելված N 1
« » « » 2020 թ. կնքված
<<ԳՀԱՊՁԲ-2020/15-4-ԵՊԲՀ-3>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը,ֆիրմայի անվանումը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
65	33691159/19	Խմբային և ռեզուս համակարգի հակամարմինների որոշման հավաքածու ABO Rh-D(Anti A, AntiB, AntiA+B, Anti D, Anti-CDE/Ctrl)՝ սյունային ագլյուտինացիայի հիման	Խմբային և ռեզուս համակարգի հակամարմինների որոշման հավաքածու ABO Rh-D(Anti A, AntiB, AntiA+B, Anti D, Anti-CDE/Ctrl)՝ սյունային	Խմբային և ռեզուս համակարգի հակամարմինների որոշման հավաքածու ABO Rh-D(Anti A, AntiB, AntiA+B, Anti D, AntiCDE/Ctrl) - Anti-C: Կասսետա, որը պարունակում է՝ ապակյա միկրոսֆերաներ և կազմված է հետևյալ սյունակներից՝ Մոնոկլոնալ հակամարմիններ Anti-C մարդկային (IgM, կլոն MS24): Anti-E՝ մոնոկլոնալ	հատ	1732.80	2079360	1200	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1200	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում

		վրա կասետա	ագլյուտինա ցիայի հիման վրա կասետա ABO Rh-D(Anti A, AntiB, AntiA+B, Anti D, Anti-CDE/Ctrl Ortho Clinical Diagnostics	հակամարմիններ Anti-E մարդկային (IgM, կլոն C2): Anti-c՝ մոնոկլոնալ հակամարմիններ Anti-c մարդկային (IgM, կլոն MS42): Anti-e՝ մոնոկլոնալ հակամարմիններ Anti-e մարդկային (IgM, կլոն MS16, MS21 և MS63): Anti-K՝ մոնոկլոնալ հակամարմիններ Anti-K1 մարդկային (IgM, կլոն MS56): Կոնտրոլ՝պոտենցող նյութ: Սյունային ագլյուտինացիայի հիման վրա կասետա ապակյա միկրոսֆերաների կիրառմամբ: Ֆորմատ՝ 1 հատ կասետա: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:							
66	33691159/20	Խմբային և ռեզուս	Խմբային և ռեզուս	Խմբային և ռեզուս համակարգի	հատ	2328	2328000	1000	Գնորդի նշված	1000	Ապրանքի մատակարա

		համակարգի հակամարմինների որոշման հավաքածու՝ կասետա ապակյա միկրոսֆերաներով և սյունակներով	համակարգի հակամարմինների որոշման հավաքածու՝ կասետա ապակյա միկրոսֆերաներով և սյունակներով Kell (Anti C, Anti E, Anti c, Anti e, Anti K Anti Ig M, MS24 Anti E Ig M, C2 Anti c Ig M, MS42 Anti e Ig M, MS16, MS21 և MS63 Anti K, Anti K1 (Ig M,	հակամարմինների որոշման հավաքածու Kell (Anti C, Anti E, Anti c, Anti e, Anti K): Կասսետա, որը պարունակում է՝ ապակյա միկրոսֆերաներ և կազմված է հետևյալ սյունակներից՝Մոնոկլոնալ հակամարմիններ Anti C մարդկային(Ig M, MS24 կլոն) Մոնոկլոնալ հակամարմիններ Anti E մարդկային (Ig M, C2 կլոն): Մոնոկլոնալ հակամարմիններ Anti c մարդկային (Ig M, MS42 կլոն):Մոնոկլոնալ հակամարմիններ Anti e մարդկային Ig M, MS16, MS21 և MS63 կլոն) : Մոնոկլոնալ հակամարմիններ Anti K, Anti K1 մարդկային(Ig M,					հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով		րումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում

			MS56 Ortho Clinical Diagnostics	MS56 կլոն):Կոնտրոլ՝պոտենցող նյութ: Ամորֆային աֆինային ծածկույթի օգտագործում կոլլագենի ագլյուտինացիայի հիմքի վրա: Ֆորմատ՝ 1 հատ կասետա: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:							
67	33691158/5	Հակաշիճուկ անտի A /Anti A Ig M, BIRMA-1 կլոն/	Հակաշիճուկ անտի A /Anti A Ig M, BIRMA-1 կլոն/ /Anti A Ig M, BIRMA-1 / Ortho Clinical Diagnostics	Բիոկլոնալ հակաշիճուկ Anti A Ig M, BIRMA-1 տեսակի կլոն: Ֆորմատ՝ 10մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:	հատ	13651.67	40955	3	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցայի

											ն օրվա ընթացքում
68	33691158/6	Հակաշիճուկ անտի B /Anti B Ig M, LB-2 կլոն/	Հակաշիճուկ անտի B /Anti B Ig M, LB-2 կլոն/ /Anti B Ig M, LB-2 Ortho Clinical Diagnostics	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti B Ig M, LB-2 տեսակի կլոն: Ֆորմատ՝ 10մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:	հատ	7333	21999	3	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
69	33691158/7	Հակաշիճուկ անտի AB /Ig M, ES4, ES15 կլոն/	Հակաշիճուկ անտի AB /Ig M, ES4, ES15 կլոն/ AB /Ig M, ES4, ES15/ Ortho Clinical Diagnostics	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti AB Ig M, ES4, ES15 կլոն: Ֆորմատ՝ 10մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման	հատ	15000	45000	3	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի

				պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:							ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
70	33691158/8	Հակաշիճուկ անտի E /Anti E Ig M, C2 կլոն/	Հակաշիճուկ անտի E /Anti E Ig M, C2 կլոն/ /Anti E Ig M, C2/ Ortho Clinical Diagnostics	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti E Ig M, C2 կլոն: Ֆորմատ՝ 5մլ սրվակ/հատ: Այն նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:	հատ	33000	99000	3	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
71	33691158/9	Հակաշիճուկ անտի e /Anti e Ig M, MS16, MS21, MS63 կլոն/	Հակաշիճուկ անտի e /Anti e Ig M, MS16,	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti e Ig M, MS16, MS21, MS63 կլոն: Ֆորմատ՝ 5մլ սրվակ/հատ: Այն նոր է, չօգտագործված:	հատ	62000	186000	3	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ

			MS21, MS63 կլոն/ /Anti e Ig M, MS16, MS21, MS63/ Ortho Clinical Diagnostics	Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:					114 հասցեով		կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
72	33691158/10	Հակաշիճուկ անտի c /Anti c Ig M, MS24 կլոն/	Հակաշիճուկ անտի c /Anti c Ig M, MS24 կլոն/ Anti c Ig M, MS24 Ortho Clinical Diagnostics	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti c Ig M, MS24 կլոն: Ֆորմատ՝ 5մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:	հատ	121000	121000	1	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում

73	33691158/11	Հակաշիճուկ անտի C /Anti C Ig M, MS24 կլոն/	Հակաշիճուկ անտի C /Anti C Ig M, MS24 կլոն/ Anti C Ig M, MS24 Ortho Clinical Diagnostics	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti C Ig M, MS24 կլոն: Ֆորմատ՝ 5մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:	հատ	117000	234000	2	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	2	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
74	33691158/12	Հակաշիճուկ անտի D /Anti D Ig M, TH-28, Ig G MS-26 կլոն/	Հակաշիճուկ անտի D /Anti D Ig M, TH-28, Ig G MS-26 կլոն/ /Anti D Ig M, TH-28, Ig G MS-26 Ortho Clinical	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti D Ig M, TH-28 տեսակի կլոն, Ig G MS-26 տեսակի կլոն: Ֆորմատ՝ 10մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման	հատ	22333	66999	3	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝

			Diagnostics	պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:							20 օրացուցայի ն օրվա ընթացքում
75	33691158/13	Հակաշիճուկ անտի D (week D) /Anti D Ig Mig G, LDM3/ESD 1 կլոն/	Հակաշիճուկ անտի D (week D) /Anti D Ig Mig G, LDM3/ESD1 կլոն/ Anti D Ig Mig G, LDM3/ESD1 Ortho Clinical Diagnostics	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti D Ig Mig G, LDM3/ESD1 տեսակի կլոն: Ֆորմատ՝ 5մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:	հատ	52950	52950	1	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1	Ապրանքի մատակարա րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի ՝ 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
76	33691158/14	Հակաշիճուկ անտի K /Anti K Ig M, MS56 կլոն/	Հակաշիճուկ անտի K /Anti K Ig M, MS56 կլոն/ Anti K Ig M, MS56	Մոնոկլոնալ հակաշիճուկ Anti K Ig M, MS56 տեսակի կլոն: Ֆորմատ՝ 5մլ սրվակ/հատ: Այն նոր է , չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության	հատ	36000	72000	2	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	2	Ապրանքի մատակարա րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ

			Ortho Clinical Diagnostics	ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: For In Vitro Diagnostic:							Պատվիրատուի ներկայացված պահանջի ՝ 20 օրացուցային օրվա ընթացքում

***Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:**

***Բոլոր չափաբաժիններում՝ եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:**

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.24 13:08:27 AMT

ՎԱՃԱՌՈՂ
«Ար-Մեդիկա» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Լենինգրադյան 23/11,92տ,
Բանկ՝ ԱմերիաԲանկ ՓԲԸ
Հ/Հ 1570023018670100
ՀՎՀՀ 01268548
Հեռ՝ +374 10 38 01 81
Էլ.հասցե ՝ armedica2010@gmail.com
Տնօրեն՝ Աննա Սադոյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by HAKOBYAN NARINE 5103830671
Date: 2020.03.19 12:06:52 GMT+04:00

Հավելված N 2
« » « » 2020 թ. կնքված
<<ԳՀԱՊՁԲ-2020/15-4-ԵՊԲՀ-3>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
65	33691159/19	Խմբային և ռեզուս համակարգի հակամարմինների որոշման հավաքածու ABO Rh-D(Anti A, AntiB, AntiA+B, Anti D, Anti-CDE/Ctrl)՝ սյունային ագլյուտինացիայի հիման վրա կասետա	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
66	33691159/20	Խմբային և ռեզուս համակարգի հակամարմինների որոշման հավաքածու՝ կասետա ապակյա միկրոսֆերաներով և սյունակներով	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
67	33691158/5	Հակաշիճուկ անտի A /Anti A Ig M, BIRMA-1 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
68	33691158/6	Հակաշիճուկ անտի B /Anti B Ig M, LB-2 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
69	33691158/7	Հակաշիճուկ անտի AB /Ig M, ES4, ES15 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

70	33691158/8	Հակաշիճուկ անտի E /Anti E Ig M, C2 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
71	33691158/9	Հակաշիճուկ անտի e /Anti e Ig M, MS16, MS21, MS63 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
72	33691158/10	Հակաշիճուկ անտի c /Anti c Ig M, MS24 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
73	33691158/11	Հակաշիճուկ անտի C /Anti C Ig M, MS24 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
74	33691158/12	Հակաշիճուկ անտի D /Anti D Ig M, TH-28, Ig G MS-26 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
75	33691158/13	Հակաշիճուկ անտի D (week D) /Anti D Ig Mig G, LDM3/ESD1 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
76	33691158/14	Հակաշիճուկ անտի K /Anti K Ig M, MS56 կլոն/	0	0	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.24 13:08:50 AMT

ՎԱՃԱՌՈՂ
«Ար-Մեդիկա» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Լենինգրադյան 23/11,92տ,
Բանկ՝ ԱմերիաԲանկ ՓԲԸ
Հ/Հ 1570023018670100
ՀՎՀՀ 01268548
Հեռ՝ +374 10 38 01 81
Էլ.հասցե ՝ armedica2010@gmail.com
Տնօրեն՝ Աննա Սադոյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by HAKOBYAN NARINE 5103830671
Date: 2020.03.19 12:07:26 GMT+04:00

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն